ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 792-Ա **26 դեկտեմբերի 2025 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի N 443-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ միասնական խորհուրդների կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի մայիսի 10-ի N 245-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 443-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման հավելվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան Հ. 1 հիմնական, Գավառի Ա. Իսահակյանի անվան Հ. 4 հիմնական, Գավառի Հ. 5 հիմնական և Գավառի Գեորգի Մնացականյանի անվան Հ. 7 միջնակարգ դպրոցների միասնական կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում «Սահակյան Լիլիթ Պարգևի /մանկխորհրդի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Ղանդիլյան Սիրուշ Լյովայի /մանկխորհրդի ներկայացուցիչ/ բառերով:

26.12.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37108405

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ